ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/72-2024

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19 հունիսի 2024 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	**Տ. Խաչատրյան**

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ՝

Էկոնոմիկայի նախարար	Գ. Պապոյան
Ֆինանսների նախարարի տեղակալ	Ա. Պողոսյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Ա. Հարությունյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ	Ռ. Սիմոնյան
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն	Լ. Օհանեսյան
«Ինժեներական ասոցիացիա» ՀԿ	Ա. Սալաթյան
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	Ա. Խաչատրյան
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ	Ա. Հախնազարյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Հ. Զաքոյան
«Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ	Հ. Ֆանյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ	Լ. Մնացականյան
«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային կազմակերպություն	Ն. Մանուկովա
«Փոքր և միջին ձեռնարկության համագործակցության ասոցիացիա» ՀԿ	Հ. Ավագյան
«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա	Կ. Զաքարյան

Խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակիցներ՝

Կենտրոնական բանկի խորհրդի անդամ	Ա. Մանուկյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	Ա. Մանուկյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության	Լ. Հարությունյան
մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ	Ա. Կարապետյան

Պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետ	Ն. Թադևոսյան Ն. Լիպարի Ե. Տրախալինա
Համաշխարհային բանկի ներկայացուցիչ	Կ. Ազարյան
Վերակառուցման և զարգացման բանկի ներկայացուցիչ	
Վերակառուցման և զարգացման բանկի ներկայացուցիչ	Մ. Այվազյան
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ	Հ. Ջաքարյան
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տեղակալ	Ք. Գևորգյան
Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ	Գ. Գալյան
Էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի վարչության պետ	Լ.Մնացականյան
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ներդրումային գծով տնօրեն	Է. Մարգարյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ ներկայացուցիչ	
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ ներկայացուցիչ	
Քարտուղարության անդամներ՝	
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար	Հ. Պատվականյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու	Հ. Մալխասյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ	Դ. Աղաջանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու	Հ. Տոնապետյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող	Վ. Կամարյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ	Լ. Հակոբյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ	Հ. Հովհաննիսյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի գլխավոր մասնագետ	Փ. Ղազարյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Օրակարգային հարց 1. Օրակարգի հաստատում

Փոխվարչապետի առաջարկությամբ՝ միաձայն հաստատվեց Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հերթական նիստի օրակարգը:

Օրակարգային հարց 2. Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին Խորհրդի քարտուղարի զեկուցում:

1. **Զեկույց ներկայացրեց՝**

   ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ անդրադառնալով նախորդ նիստի արդյունքում ընդունված որոշումների կատարման ընթացքին.

   1) Ներկայացնելով մշակող արդյունաբերության ոլորտում նոր, ոլորտում չներգրավված աշխատողների ներգրավման պետական աջակցության ծրագիրը՝ նշեց, որ որոշումը հաստատվել է Կառավարության կողմից՝ ընդգծելով գործողության մեջ որոշման մշտադիտարկման անհրաժեշտությունը,

   2) Նշեց, որ առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների պարբերաբար չկատարումը կանխարգելող կարգավորումներն արդեն ուժի մեջ են,

   3) Նշեց նաև, որ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է ՍԵՅՖ (Simple Agreement for Future Equity - SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծմանն ուղղված՝ ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը,

   4) Տեղեկացրեց, որ օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման նպատակով վերոնշյալ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը քննարկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում և առաջարկվել ևս մեկ անգամ շրջանառել, իսկ այնուհետև՝ ուղարկել Արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացություն տրամադրելու համար,

   5) Տեղեկացրեց, որ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով ««Հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքներն

ամփոփման փուլում են, և այս պահին ակնկալում են ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը,

6) Տեղեկացրեց, որ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին և «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը լրամշակվել են Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի գործընկերների հետ, և փաթեթը ամբողջությամբ համաձայնեցված է ինչպես բիզնես համայնքի, այնպես էլ համապատասխան գերատեսչությունների հետ,

7) Գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորության վերաբերյալ նշեց, որ տեսչական մարմինները համակարգող գրասենյակի կողմից ստացվել են առարկություններ,

8) Տեղեկացրեց, որ ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳԱԱ կամ ԱԴԳՏ կոդերի սխալ տպագրման դեպքում ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանման նախագիծը քննարկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում և առաջարկվել ևս մեկ քննարկում կազմակերպել Ֆինանսների նախարարության, Էկոնոմիկայի նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի հետ,

9) Նշեց, որ գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրմանն ուղղված՝ «Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծն ուղարկվել է Արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության,

10) Տեղեկացրեց, որ կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայման նպատակով ձևավորված փաթեթը շրջանառվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Ի հավելումն, Պատվականյանը նշեց, որ նախագիծը բաղկացած էր միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման պահանջների և մագիստրոսական կրթական ծրագրերի լիցենզավորման պահաջների վերանայման հատվածներից: Հաշվի առնելով ԿԳՄՄՆ-ի կողմից իրականացվող միջին մասնագիտական կրթության ոլորտում ավելի լայն բարեփոխման օրակարգը՝ նախագծի առաջին հատվածը ներառվել է

ԿԳՄՄՆ-ի կողմից շրջանառվող փաթեթում և ընդունվել ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ: Արդյունքում, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատություններին վերաբերող որոշ պահանջներ վերանայվել են ԿԳՄՄՆ կողմից: Պատվականյանը նշեց, որ, ըստ այդմ, սկզբնական նախագիծը խմբագրվել է՝ թողնելով միայն մագիստրոսական ծրագրերի լիցենզավորման պահանջների վերանայման հատվածը,

11) Անդրադառնալով բազմամյա տնկարկների հիմման նպատակով համայնքային հողերի վարձակալության ժամկետի վերանայման անհրաժեշտությանը՝ նշեց, որ «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ քննարկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստում, որտեղ առաջարկվել է լրամշակել այն՝ անդրադարձ կատարելով նաև այգեհիմման նպատակով հողերի վարձակալության պայմանների փոփոխություններին՝ ելնելով արդեն իսկ արված ներդրումներից: Պատվականյանը հավելեց, որ նախագիծը քննարկվում է Էկոնոմիկայի նախարարության գործընկերների հետ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.

1) Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը նկատեց, որ որոշ արտադրողներ մտահոգություն են հայտնում, որ առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների կատարմանն առնչվող փոփոխությունների արդյունքում առևտրային ցանցերը կրճատել են ցուցադրված և պահեստային ապրանքների քանակը՝ կարևորելով իրականացված փոփոխությունների մշտադիտարկման անհրաժեշտությունը:

2) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, անդրադառնալով բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու առաջարկին, կարևորեց բիզնես-կրթություն կապը ամրապնդող ճկուն կարգավորումների ներդրման անհրաժեշտությունը: Այս համատեքստում փոխվարչապետը կարևորեց ակտիվների տրամադրման անհատույց գործարքների դեպքում շահութահարկով հարկման բազայից նվազեցնելու սահմանաչափի վերանայման նախաձեռնությունը՝ առաջարկելով քննարկել նաև սահմանաչափի, դրամական և գույքային հատկացումների մեջ տարբերակում սահմանելու հնարավորությունը, ինչպես նաև նվիրաբերությունների ծավալի մեծացումը ԲՈՒՀ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի հետ կապակցելու նպատակահարմարությունը:

3. Փոխվարչապետի կողմից տրվեցին հետևյալ հանձնարարականները.

1. Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանին.

1.1) Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցությամբ 2024թ. հունիսի 30-ի դրությամբ, իսկ այնուհետև՝ եռամսյա պարբերականությամբ, ներկայացնել մշակող արդյունաբերության ոլորտում աշխատելու նպատակով դիմում ներկայացրած շահառուների քանակի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ առանձնացնելով շահառուների մեջ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց քանակը,

1.2) մշտադիտարկել առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների կատարման կանոնակարգմանն ուղղված և ուժի մեջ մտած կարգավորումների կիրարկումը, այդ թվում՝ դրանց արդյունավետությունը քննարկելով արտադրողների հետ,

1.3) օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման նպատակով ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծը շրջանառության երկրորդ փուլի ընթացքում հավաքագրված կարծիքների հիման վրա լրամշակելիս հատուկ ուշադրություն դարձնել առաջարկվող կարգավորումների անհրաժեշտության և գործնական նշանակության հիմնավորումներին,

1.4) բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով «Հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի մասով ՀՀ ֆինանսների նախարարությունից կարծիք ստանալուց հետո նախագիծն աշխատանքային կարգով քննարկել Ֆինանսների նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի գործընկերների հետ՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով,

1.5) ուսումնասիրել գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ տեսչական մարմինների կողմից ներկայացված բացասական դիրքորոշումները՝ նախագծի քննարկումը նախատեսելով փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ անցկացվող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի օրակարգում:

1.6) Ապահովել նախագծի հետագա ընթացքը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ ևս մեկ անգամ աշխատանքային կարգով քննարկելով մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար սահմանված տեխնիկական պահանջների վերանայման հարցը:

Օրակարգային հարց 3՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասի կամ Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկելի փոխառության պայմանագրի վերաբերյալ իրավական կարգավորումների ներդրում («Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ).

1. **Զեկույց ներկայացրեց՝**

«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ ներկայացուցիչ Լուսինե Մնացականյանը՝ նշելով, որ գործող օրենսդրական կարգավորումներն արգելում են ներդրողներին պարտքով գումար տրամադրել բաժնետիրական ընկերություններին կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին՝ հնարավորություն տալով այն հետագայում վերածելու բաժնետոմսի/բաժնեմասի: Գործնականում շատ են նաև դեպքերը, երբ բաժնետերերից մեկն է ցանկություն հայտնում պարտքային գործիքով ներդրում անել ընկերության մեջ, բայց հնարավորություն չի ունենում այդ ներդրումը մյուս բաժնետերերի համաձայնությամբ փոխարկելու: Այս համատեքստում առաջարկեց սահմանել կարգավորում, որի համաձայն փոխատուն կարող է փոխառության գումարի կամ դրա մասի վերադարձ և տոկոսների կամ դրանց մի մասի վճարում պահանջելու փոխարեն փոխառության պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով փոխառուից պահանջել իր օգտին տեղաբաշխել համապատասխանաբար պայմանագրով սահմանված կարգով որոշված քանակի, տեսակի և դասի բաժնետոմսեր կամ տրամադրել բաժնեմասեր (փոխարկելի փոխառության պայմանագիր): Առաջարկեց սահմանել, որ փոխարկելի փոխառության պայմանագրում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկման հնարավորությունը պետք է սահմանված լինի պայմանագրի կնքման պահին, ինչպես նաև կանոնակարգել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և բաժնետիրական ընկերությունների կողմից փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման մասին որոշման կայացման և դրա հիման վրա բաժնետոմսերի/բաժնեմասի տրամադրման հարցը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը հավելեց, որ այս խնդրի լուծումը առանցքային նշանակություն ունի Հայաստանում ՏՏ ոլորտի զարգացման համար, քանի որ փոխարկելի պարտքային գործիքը լայնորեն օգտագործվում է ՏՏ ոլորտի ստարտափներում՝ ներդրումներ ներգրավելու համար:

ՎԶԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը ներկայացրեց մշակված և շրջանառված նախագծի

բովանդակությունը՝ նշելով, որ այն համաձայնեցվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**

1) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի կողմից կարևորվեց կարգավորումների փոփոխություններ նախաձեռնելիս առաջնորդվել մասնավոր հատվածի համար գործնականում առաջացած խնդիրների լուծման տրամաբանությամբ՝ այն հստակ արտացոլելով նախաձեռնությունների հիմնավորումներում:

Օրակարգային հարց 4. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխման նախաձեռնություն («ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ).

1. **Զեկույց ներկայացրեց՝**

1) «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Հայկազ Ֆանյանը՝ նշելով, որ 2022 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի ընդհանուր թվի 93%-ը եղել են գումարի պահանջի վերաբերյալ: Հայտնեց, որ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Վարչարարական գործընթացները նվազեցնելու նպատակով առաջարկեց բարձրացնել 100 հազար դրամի շեմը և նախատեսել, որ 300 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջով հայցը դատարանի կողմից վարույթ ընդունվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից (իսկ վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելու դեպքում՝ արբիտրաժային վարույթի սկզբի օրվանից) կամ վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից, իսկ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության ուժի մեջ մտնելու պահից՝ դեբիտորական պարտքի գումարը այդ հարկային տարում ճանաչել որպես համախառն եկամտի ավելացում: Ֆանյանը նշեց, որ սույն փոփոխությունները էական դեր են խաղալու նաև դատարանների կողմից մինչև 2 մլն դրամի բռնագանձման ենթակա գործերը նոտարներին հանձնելու Կառավարության կողմից ընդունված բարեփոխումների համատեքստում:

ՎՋԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ Դավիթ Աղաջանյանը ներկայացրեց 12,000 տնտեսավարողների շրջանակում իրականացված ուսումնասիրություն արդյունքները անհուսալի դեբիտորական պարտքի վերաբերյալ:

2. **Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները.**

1) Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը նկատեց, որ առաջարկվող փոփոխությունները կարող են հանգեցնել անվերահսկելի պարտքերի դուրսգրման պրակտիկայի:

2) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը կարևորեց բարձրացված խնդիրները և դրանց լուծում տալու անհրաժեշտությունը՝ մատնանշելով, որ փոփոխությունը օգտակար կլինի նաև դատարանների բեռնաթափման բարեփոխումների օրակարգի տեսանկյունից: Փոխվարչապետը հավելեց, որ անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել դեբիտորական պարտքեր ունեցող, ինչպես նաև դրանց դուրսգրում իրականացնող ընկերությունների պրոֆիլի վերաբերյալ:

3. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝**

1) **Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանին՝** մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկություններ տնտեսավարողների շրջանում փաստացի դեբիտորական պարտքերի վիճակագրական պատկերի վերաբերյալ՝ նախագծի հետագա ընթացքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

2) **Արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանին՝** երկշաբաթյա ժամկետում ներկայացնել վիճակագրություն՝ նոտարներիի կողմից մինչև 2 միլիոն դրամ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակվելու ընթացակարգի կիրառման վերաբերյալ, այդ թվում՝ առաջարկվող փոփոխության արդյունքում նոտարների ծառայությունների պահանջարկի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի ձևաչափի վերաբերյալ

1. «Փոքր և միջին ձեռնարկության համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հակոբ Ավագյանը մտահոգություն հայտնեց խորհրդի գործող ձևաչափի և կազմի վերաբերյալ՝ նկատելով, որ դրանում ապահովված չէ

գերփոքր և փոքր բիզնեսի ներկայացվածությունը, ինչն ազդում է նաև խորհրդի նիստերի օրակարգի ձևավորման վրա:

ՎՔԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը անդրադարձ կատարելով մտահոգությանը՝ նշեց, որ խորհրդի կազմում չընդգրկված՝ գերփոքր և փոքր բիզնեսի շահերը ներկայացնող կազմակերպությունները ՓՄՁ զարգացման խորհրդի դիտորդ են և հնարավորություն ունեն ևս հարցեր ներկայացնել՝ օրակարգում ներառելու նպատակով:

2. **Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանին՝** մեկամսյա ժամկետում քննարկել գործող ձևաչափի վերաբերյալ ներկայացված մտահոգությունները, այդ թվում՝ գնահատել գերփոքր բիզնեսի ներկայացվածությունը մեծացնելու անհրաժեշտությունը՝ արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը և հնարավոր առաջարկները ներկայացնելով փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ